Ֆինանսական հաշվետվություններ և

Անկախ աուդիտորական եզրակացություն

"Մետալ Գռուպ"

Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն

31 դեկտեմբերի 2025թ.

Բովանդակություն

	Էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	5
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9

"Ֆոր Էյ Քնսալթինգ" ՓԲԸ "Four A Consulting" CJSC

audit accounting advisory assurance

ՀԱՊ ՀԿ Ռեեստր 1 20 0219
Հասցե Նալբանդյան50/136, քերևանՀՀ,
Հեռախոս +374(10) 52 08 47

www. 4aconsulting.am
info@4aconsulting.am

Address CAA NGO Register 1 20 0219
Telephone Nalbandyan 50/136, Yerevan, RA
+374(10) 52 08 47

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

"Մետալ Գռուպ" ՍՊԸ-ի միակ մասնակցին,

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել "Մետալ Գռուպ" ՍՊԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2025թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Ընկերության 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն փոքր եւ միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Կարծիքի հիմքեր

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ "*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*" բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված "Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի" (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ների համաձայն, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլ ընտրանք:
Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:
Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը:

Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

29 ապրիլի, 2026թ.

Անիկ Մարտիրոսյան
Տնօրեն-Բաժնետեր/ Աուդիտի ղեկավար

"FOUR A CONSULTING"
00148693

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	952,076	586,748
Ոչ նյութական ակտիվներ		749	854
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռք բերելու համար		657,696	480,000
Հետաձգված հարկեր	5	15,033	3,283
		1,625,554	1,070,885
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	6	2,447,030	2,120,077
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	3,058,843	2,721,895
Դրամական միջոցներ	8	856,307	813,844
		6,362,180	5,655,816
Ընդամենը ակտիվներ		7,987,734	6,726,701
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուստներ			
Կանոնադրական կապիտալ	9	530,000	530,000
Կուտակված շահույթ		3,681,608	2,494,984
		4,211,608	3,024,984
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	10	299,675	272,318
Ակտիվներին վերաբերող շնորհ		366	426
		300,041	272,744
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	10	2,172,712	2,281,302
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	1,274,887	1,025,988
Շահութահարկի պարտավորություն		28,486	121,683
		3,476,085	3,428,973
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		7,987,734	6,726,701

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2026թ. ապրիլի 29-ին՝

Ռաֆայել Հակոբջանյան
Տնօրեն

Արտակ Հակոբյան
Ֆինանսական տնօրեն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 25-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ	12	12,492,916	15,493,901
Ինքնարժեք	13	(10,493,705)	(13,072,597)
Համախառն շահույթ		1,999,211	2,421,304
Այլ եկամուտներ	14	346,531	31,778
Իրացման ծախսեր	15	(432,980)	(435,740)
Վարչական ծախսեր	16	(162,723)	(163,304)
Այլ ծախսեր	17	(347,998)	(39,547)
Գործառնական գործունեությունից շահույթ		1,402,041	1,814,491
Ֆինանսական ծախսեր, զուտ	18	(34,192)	(42,740)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)	19	59,137	(2,945)
Շահույթը մինչև հարկերը		1,426,986	1,768,806
Շահութահարկի գծով ծախս	20	(240,362)	(314,069)
Զուտ շահույթ		1,186,624	1,454,737
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվի շահույթին կամ վնասին			
Հոդվածներ, որոնք հետագայում կվերադասակարգվեն շահույթին կամ վնասին			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		1,186,624	1,454,737

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 25-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2024թ. հունվարի 1- ի դրությամբ	530,000	1,040,247	1,570,247
Տարվա շահույթ	-	1,454,737	1,454,737
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	1,454,737	1,454,737
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	530,000	2,494,984	3,024,984
Տարվա շահույթ	-	1,186,624	1,186,624
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	1,186,624	1,186,624
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	530,000	3,681,608	4,211,608

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 25-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ	1,186,624	1,454,737
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն	118,786	70,172
Հիմնական միջոցի օտարում շահույթ/վնաս	(38,038)	-
Շահութահարկի գծով ծախս	240,362	314,069
Ֆինանսական եկամուտ	(29,781)	(17,645)
Ֆինանսական ծախսեր	63,973	60,385
Փոխարժեքային տարբերությունից շահույթ/վնաս	(59,137)	2,945
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	1,482,789	1,884,663
Պաշարների փոփոխություն	(326,953)	43,103
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(336,948)	(533,759)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	300,570	(83,095)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	1,119,458	1,310,912
Վճարված տոկոսներ	(63,973)	(60,385)
Վճարված շահութահարկ	(345,309)	(259,383)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	710,176	991,144
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցի օտարումից մուտք	224,875	
Տրված կանխավճարներ	(177,696)	(480,000)
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերում	(670,846)	(106,114)
Շնորհներ	(60)	426
Տոկոսներից եկամուտ	29,781	17,645
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(593,946)	(568,043)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված վարկեր, փոխառություններ զուտ	(73,538)	(79,039)
Ֆինանսական գործունեությունից ստացված/ գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(73,538)	(79,039)
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ	42,692	344,062
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(229)	7,851
Մնացորդներ դրամարկղում և բանկերում տարվա սկզբում	813,844	461,931
Մնացորդներ դրամարկղում և բանկերում տարվա վերջում	856,307	813,844

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 25-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

"Մետալ Գռուպ" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2015թ. սեպտեմբերի 29-ին:

Ընկերության միակ մասնակիցն է.

- Ռաֆայել Հակոբջանյանը (ՀՀ քաղաքացի) 100 % բաժնեմաս:

Ընկերության հիմնական գործունեությունն է շինանյութի մեծածախ և մանրածախ առևտուրը և անուրների ու ձգված ամրակարերի արտադրությունը:

Ընկերության իրավաբանական հասցեն է ՀՀ ք. Երևան, Արտաշիսյան 94/10:

2025թ. Ընկերության աշխատողների տարեկան միջին թիվը կազմել է 115 մարդ (2024թ.՝ 110 մարդ):

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են փոքր եւ միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ-ների ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են իրական արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 21-ում:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքները.

	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ռուբլի	3.71	4.8711
ԱՄՆ դոլար	396.56	381.36
Եվրո	413.89	449.01

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարներ, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ: Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր, կառուցվածքներ	1-20 տարի,
Մեքենաներ, սարքավորումներ	1- 10 տարի,
Տրանսպորտային միջոցներ	1- 8 տարի,
Արտադրական գույք, տնտեսական գույք	1-8 տարի,
Այլ հիմնական միջոցներ	1- 8 տարի:

3.3 Հիմնական միջոցների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է , ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեն: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.4 Վարձակալված ակտիվներ

Ընկերության վարձակալությունները դիտվում են որպես գործառնական վարձակալություններ: Գործառնական վարձակալության գծով վճարները գծային հիմունքով ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության, ծախսագրվում են իրականացման պահին:

3.5 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին՝ մուտք, առաջին՝ ելք մեթոդը և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.6 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները լրանում են, կամ երբ ֆինանսական ակտիվները և բոլոր նշանակալից ռիսկերը և հատուցումները փոխանցվում են:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, ենթակա չեն վճարման, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և սկզբնական չափում

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ,
- փոխառություններ և դեբիտորական պարտքեր:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, թե ուղղակիորեն այլ համապարփակ արդյունքում:

Ընդհանուր առմամբ, Ընկերության բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով հաշվեփակման ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ներկայացվում են "Ֆինանսական ծախս", "Ֆինանսական եկամուտ" կամ "Այլ ֆինանսական արդյունքներ" հոդվածներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է "Այլ ծախսեր" հոդվածում:

I. ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները կամ այն ֆինանսական ակտիվները, որոնք որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով դասակարգվել են Ընկերության կողմից՝ սկզբնական ճանաչման ժամանակ: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք ենթակա չեն հեջավորման, դասակարգվում են այս կատեգորիայում:

Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հիմնված է իրական արժեքի փոփոխության վրա, որը որոշվում է՝ ուղղակիորեն վկայակոչելով գործող շուկայում գործարքները կամ գործող շուկայի բացակայության դեպքում՝ գնահատման մեթոդի միջոցով:

II. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ուղղակիորեն ճանաչելով այլ համապարփակ արդյունքներում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիայում դասակարգված ֆինանսական գործիքներից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ նշված ակտիվները վաճառվում են կամ երբ ներդրումն արժեզրկվում է: Արժեզրկման դեպքում ցանկացած վնաս, որը նախկինում ճանաչվել էր այլ համապարփակ արդյունքներում, փոխանցվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն: Սեփական կապիտալի գործիքներից առաջացած և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված վնասները չեն հակադարձվում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, այլ ճանաչվում են սեփական կապիտալում:

III. Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք չեն գնանշվում ակտիվ շուկայում և ներառում են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, ինչպես նաև մնացորդները դրամարկղում և բանկերում:

IV. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

V. Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգում և սկզբնական չափում

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

I. Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս:

II. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.7 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են: Ընկերությունը ստեղծում է պահուստային կապիտալ՝ Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

3.8 Հատուցումներ աշխատակիցներին

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

3.9 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ, ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

3.10 Հասույթի ճանաչում

Ընկերության հասույթն առաջանում է շինանյութի մեծածախ և մանրածախ առևտրից և աշխատանքների ու ծառայությունների մատուցումից:

4 Հիմնական միջոցներ

	Հողամասեր	Շենքեր և շինություններ (կառուցվածքներ)	Մեքենաներ և սարքավորումներ և տրանսպորտային միջոցներ	Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ այլ հիմանական միջոցներ	Ֆինասնական վարձակալությամբ ստացված հիմանական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	-	324,474	309,306	144,826	64,455	843,061
Ավելացում	-	-	389	2,620	102,800	105,809
Կապիտալացում	-	-	299	7	-	306
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	324,474	309,994	147,453	167,255	949,176
Ավելացում	-	356,092	734	10,827	291,813	659,466
Կապիտալացում	-	283	6,073	-	5,024	11,380
Ներքին շարժ	35,322	(35,322)	-	-	-	-
Պակասեցում	-	(187,960)	-	-	-	(187,960)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	35,322	457,567	316,801	158,280	464,092	1,432,062
Կուտակված մաշվածություն						
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	-	62,992	170,491	58,005	873	292,361
Տարվա ծախս	-	13,891	30,443	14,137	11,596	70,067
Պակասեցում	-	-	-	-	-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	76,883	200,934	72,142	12,469	362,428
Տարվա ծախս	-	20,836	23,975	14,740	59,130	118,681
Պակասեցում	-	(1,123)	-	-	-	(1,123)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	96,596	224,909	86,882	71,599	479,986
Հաշվեկշռային արժեք						
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	247,591	109,060	75,311	154,786	586,748
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	35,322	360,971	91,892	71,398	392,493	952,076

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 161,081 հազ.դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 142,958 հազ. դրամ) սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվում են զրոյական հաշվեկշռային արժեքով:

2025թ. էական ձեռքբերումներն են՝

Անվանում	*Հազար դրամ*
ՄԵՏԱՂՅԱ ՊՐՈՖԻԼՆԵՐԻ ՁԵԼԱՎՈՐՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄԹՇՂ-ով SG տիպի N 592	103,486
Կոմիտաս 59/12շ. 2-րդ մ/շ., շին. 162 հաս. տարածք	187,960
Կոմիտաս 59/12շ. 1-ին մ/շ., շին. 363 հաս. տարածք	153,305
Բեռնատար ավտոմեքենա ISUZU NQR90L-LQ5VAYN, Առանց բեռնատար թափքի,150 Ձ/ՈՒ,5.2 Լ դիզել Նույնականացման համար JAAN1R90LS7100579	13,733
Ծալքաթիթեղի արտադրության հոսքգիծ TR 8.03 and TR 10	39,563
Ծալքաթիթեղի արտադրության հոսքգիծ HC 21	39,563
Մետաղական կղմինդրի արտադրության հոսքգիծ BD 24MS	39,355
Ծալքաթիթեղի արտադրության հոսքգիծ HC 35 և HC 60	55,753

5 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Տարեսկզբի մնացորդ	3,283	4,797
Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչված փոխհատուցում	11,750	(1,514)
Տարեվերջի մնացորդ	15,033	3,283

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2025թ. հունվարի 1	Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2025թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային ակտիվներ			
Արձակուրդի պահուստ	1,282	(396)	886
Դեբիտորների գծով	2,001	12,146	14,147
	3,283	11,750	15,033
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	3,283	11,750	15,033

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2024թ. հունվարի 1	Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2024թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային ակտիվներ			
Արձակուրդի պահուստ	308	974	1,282
Դեբիտորների գծով	4,489	(2,488)	2,001
	4,797	(1,514)	3,283
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	4,797	(1,514)	3,283

6 Պաշարներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հումք և նյութեր	261,537	10,902
Ապրանքներ	2,135,470	2,101,112
Արտադրանք	50,023	8,063
	2,447,030	2,120,077

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության շրջանառու միջոցներից գրավադրված են Ինեկոբանկ ՓԲԸ –ում:

7 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	2,553,412	2,571,636
Առևտրային դեբիտորական պարտքերի պահուստ	(78,595)	(11,116)
Տրված կանխավճարներ	512,821	134,094
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	71,205	27,281
	3,058,843	2,721,895

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Առևտրային դեբիտորական պարտքի հավաքագրելիությունը որոշելիս հաշվի է առնվում դեբիտորի պարտքի մարման ժամանակացույցի ցանկացած փոփոխություն՝ սկսած պարտքի առաջացման պահից մինչև հաշվետու ամսաթիվը:

8 Դրամական միջոցներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամարկղ	6,915	8,463
Մնացորդներ բանկերում ՀՀ դրամով	841,342	796,507
Մնացորդներ բանկերում արտարժույթով	8,050	8,874
	856,307	813,844

9 Սեփական կապիտալ

9.1 Կանոնադրական կապիտալ

31.12.2025թ. դրությամբ Ընկերության Կանոնադրական կապիտալ կազմում է 530,000 հազար դրամ:

9.2 Շահաբաժիններ

2025թ, և 2024թ, Ընկերությունը շահաբաժին չի հայտարարել:

10 Վարկեր և փոխառություններ

	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.
Վարկեր	142,192	252,473	23,358	142,107
Լիզինգ	137,056	46,945	276,317	130,211
Փոխառություններ	1,893,464	1,981,884	-	-
	2,172,712	2,281,302	299,675	272,318

Ընկերության ոչ ընթացիկ վարկերը 31.12.2025թ. դրությամբ հետևյալն է՝

Անվանում	Արժ.	Տոկոս	Գումար	Արտ. ազդ.	Մնացորդը 31.12.24 դրությամբ		Ավելացում	Մարում	Մնացորդը 31.12.25 դրությամբ	
					Արտարժ	Հազ. դրամ	Հազ. դրամ	Հազ. դրամ	*Արտարժ*	Հազ. դրամ
Ինեկոբանկ ՓԲԸ EM23/00127	AMD	10,5%	150,000 հազ. դրամ	-	-	42,778	-	42,778	-	-
Ինեկոբանկ ՓԲԸ EM23/00720	USD	8%	750 000 USD	*1,900*	125,000	49,570	88	49,658	-	-
Ինեկոբանկ ՓԲԸ EM23/00719	USD	8%	750 000 USD	*1,907*	125,476	49,759	83	49,842	-	-
Ինեկոբանկ ՓԲԸ EM25/00371	USD	7,5%	70 000 USD	*565*	-	-	3,939	27,297	61,250	23,358
Ընդամենը				4,372	**250,476**	**142,107**	**4,110**	**169,575**	**61,250**	**23,358**

Ընկերության ընթացիկ վարկերը և փոխառությունները 31.12.2025թ. դրությամբ հետևյալն է՝

Անվանում	Արժույթ	Տոկոս	Արտ. ազդ.	Մնացորդը 31.12.24 դրությամբ		Ավելացում	Մարում	Մնացորդը 31.12.25 դրությամբ	
				Արտարժ	Հազ. դրամ	AMD	AMD	*Արտարժ*	Հազ. դրամ
Ինեկոբանկ ՓԲԸ EM23/00127	AMD	10,5%	-	-	51,333	-	-	-	42,778
Ինեկոբանկ ՓԲԸ EM23/00720	USD	8%	-	250,000	99,140	-	-	125,000	47,670
Ինեկոբանկ ՓԲԸ EM23/00719	USD	8%	-	250,952	99,518	-	-	125,476	47,851
Ինեկոբանկ ՓԲԸ EM25/00371	USD	7,5%	-	-	-	8,750	3,337	8,750	3,337
Ընդամենը			-	**542,473**	**281,634**	**500,952**	**249,991**	**259,226**	**141,636**
Նորիկ Հակոբջանյան	AMD	0 %	-	-	882,464	-	170,000	-	712,464
Ռաֆայել Հակոբջանյան	RUB	0%	*(2,979)*	*2,539,000*	9,420	3,017	12,437	-	-
Ռաֆայել Հակոբջանյան	AMD	0%	-	-	1,090,000	247,000	156,000	-	1,181,000
Ընդամենը			*(2,979)*	*2,539,000*	1,867,797	**250,017**	**338,437**	-	**1,893,464**

31.12.2025թ. դրությամբ վարկերի գծով չկրած տոկոսային ծախսերը կազմում են 556 հազ. դրամ:

Լիզինգ

Ընկերությունը 22.04.2024թ.-ին "Ինկեկոբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է 14,400 հազ. դրամի LB24/00077 լիզինգի պայմանագիրը, 10.5% տարեկան տոկոսադրույքով, մինչև 01.05.2028թ.:
Ընկերությունը 22.04.2024թ.-ին "Ինկեկոբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է 6,000 հազ. դրամի LB24/00078 լիզինգի պայմանագիրը, 10.5% տարեկան տոկոսադրույքով, մինչև 25.06.2028թ.:
Ընկերությունը 22.04.2024թ.-ին "Ինկեկոբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է 30,000 հազ. դրամի LB24/00079 լիզինգի պայմանագիրը, 10.5% տարեկան տոկոսադրույքով, մինչև 01.05.2028թ.:
Ընկերությունը 22.04.2024թ.-ին "Ինկեկոբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է 15,360 հազ. դրամի LB24/00080 լիզինգի պայմանագիրը, 10.5% տարեկան տոկոսադրույքով, մինչև 01.05.2028թ.:
Ընկերությունը 22.04.2024թ.-ին "Ինկեկոբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է 27,840 հազ. դրամի LB24/00081 լիզինգի պայմանագիրը, 10.5% տարեկան տոկոսադրույքով, մինչև 25.06.2028թ.:
Ընկերությունը 22.04.2024թ.-ին "Ինկեկոբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է 29,760 հազ. դրամի LB24/00082 լիզինգի պայմանագիրը, 10.5% տարեկան տոկոսադրույքով, մինչև 23.02.2028թ.:
Ընկերությունը 12.08.2025թ.-ին "Ինկեկոբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է 16,480 հազ. դրամի LB25/00263 լիզինգի պայմանագիրը, 10% տարեկան տոկոսադրույքով, մինչև 12.02.2029թ.:
Ընկերությունը 12.07.2024թ.-ին "Ինկեկոբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է 39,355 հազ. դրամի LB24/00154 լիզինգի պայմանագիրը, 10.5% տարեկան տոկոսադրույքով, մինչև 16.06.2029թ.:
Ընկերությունը 12.07.2024թ.-ին "Ինկեկոբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է 55,753 հազ. դրամի LB24/00157 լիզինգի պայմանագիրը, 10.5% տարեկան տոկոսադրույքով, մինչև 16.06.2029թ.:
Ընկերությունը 12.07.2024թ.-ին "Ինկեկոբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է 103,846 հազ. դրամի LB24/00174 լիզինգի պայմանագիրը, 10.5% տարեկան տոկոսադրույքով, մինչև 12.08.2028թ.:
Ընկերությունը 12.07.2024թ.-ին "Ինկեկոբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է 39,563 հազ. դրամի LB24/00156 լիզինգի պայմանագիրը, 10.5% տարեկան տոկոսադրույքով, մինչև 29.01.2029թ.:

Ընկերությունը 12.08.2025թ.-ին "Ինկեկոբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է 16,480 հազ. դրամի LB25/00262 լիզինգի պայմանագիրը, 10% տարեկան տոկոսադրույքով, մինչև 01.09.2029թ.:
Ընկերությունը 12.07.2024թ.-ին "Ինկեկոբանկ" ՓԲԸ-ի հետ կնքել է 39,563 հազ. դրամի LB24/00155 լիզինգի պայմանագիրը, 10.5% տարեկան տոկոսադրույքով, մինչև 29.01.2029թ.:

03.04.2023թ. Ինեկոբանկ ՓԲԸ-ի հետ կնքվել է լիզինգի պայմանագիր, 141,000 ԱՄՆ դոլար արժեքով 4 հիմնական միջոցի ձեռքբերման վերաբերյալ, լիզինգի տոկոսադրույքը սահմանվել է 8%, որն ամբողջությամբ ֆինանսավորվում է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից: Պայմանագիրը գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումը:

Սուբսիդավորվող գումարը կազմել է 33,937 հազ. դրամ:31.12.2025թ. դրությամբ լիզինգների մնացորդը կազմում է 413,277 հազ. դրամ:

11 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	1,142,110	812,332
Ստացված կանխավճարներ	99,873	110,113
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	17,942	88,234
Աշխատավարձի գծով պարտք	5,093	3,190
Արձակուրդի պահուստ	4,923	7,123
Այլ կրեդիտորական պարտքեր	4,946	4,996
	1,274,887	1,025,988

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություն, որն ապահովում է բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

12 Հասույթ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ապրանքների վաճառքից հասույթ	11,659,352	14,832,129
Արտադրանքի վաճառքից հասույթ	660,584	481,000
Ծառայությունների և աշխատանքների մատուցումից հասույթ	172,980	180,772
	12,492,916	15,493,901

13 Ինքնարժեք

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վաճառված ապրանքների ինքնարժեք	9,773,369	12,576,295
Վաճառված արտադրանքի ինքնարժեք	593,407	392,138
Կատարված աշխատանքների ինքնարժեք	126,929	104,164
	10,493,705	13,072,597

14 Այլ եկամուտներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վարձակալությունից եկամուտ	1,300	1,300
Դեբիտորական պարտքի կորուսի հակադարձումից	-	13,823
Այլ պաշարների վաճառքից եկամուտ	59,961	-
Հիմնական միջոցների վաճառքից	224,875	-
Արտարժույթի փոխարկումից եկամուտ	6,201	1,924
Վարկի սուբսիդավորման գծով եկամուտ	33,937	7,311
Գույքագրումից եկամուտ	13,719	-
Արձակուրդի պահուստից եկամուտ	2,200	-
Այլ	4,338	7,420
	346,531	31,778

15 Իրացման ծախսեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձի ծախսեր	193,796	183,404
Մաշվածության ծախսեր	17,767	39,276
Հիմնական միջոցների նորոգման ծախսեր	843	1,391
Բեռնափոխադրման ծախսեր	62,946	58,482
Մարկետինգի և գովազդի ծախսեր	1,949	1,754
Վարձակալության ծախսեր	123,792	122,435
Բարձման և բեռնաթափման ծախսեր	1,931	1,040
Այլ ծախսեր	29,956	27,958
	432,980	435,740

16 Վարչական ծախսեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձի ծախսեր	86,007	79,211
Հիմնական միջոցների մաշվածություն	25,751	19,067
Հիմնական միջոցների նորոգման ծախսեր	2,452	1,286
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	5,530	4,854
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	11,168	15,336
Բանկային և ապահովագրական ծախսեր	5,421	5,484
Վարձակալության ծախսեր	7,400	7,669
Այլ ծախսեր	18,994	30,397
	162,723	163,304

17 Այլ ծախսեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Դեբիտորական պարտքի անհուսալի ճանաչում	67,479	16,936
Հիմնական միջոցների մաշվածություն	1,245	1,245
Արտադրական ծախսումների սովորական մակարդակը գերազանցող ծախսեր	18,265	
Անհատույց տրված ակտիվներ	6,951	6,782
Արտարժույթի փոխարկման ծախսեր	15,144	11,215
Հիմնական միջոցների վաճառքից	186,837	-
Այլ պաշարների վաճառքից ծախս	46,894	-
Այլ ծախսեր	5,183	3,369
	347,998	39,547

18 Ֆինանսական ծախսեր, զուտ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տոկոսի ծախս	(63,973)	(60,385)
Տոկոսային եկամուտ	29,781	17,645
	(34,192)	(42,740)

19 Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը		
Դրամական միջոցներ	(229)	7,851
Ստացված վարկեր, փոխառություններ	7,695	16,246
Կրեդիտորական պարտքեր	51,671	(27,042)
	59,137	(2,945)

20 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	252,112	312,555
Հետաձգված հարկ (տես՝ ծանոթագրություն 5)	(11,750)	1,514
	240,362	314,069

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	1,426,986		1,768,806	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2024:18%)	256,857	18.00	318,385	18.00
Չնվազեցվող ծախսի ազդեցությունը	(16,495)	(1.16)	(4,316)	(0.24)
Շահութահարկի գծով փոխհատուցում	240,362	16.84	314,069	17.76

21 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի և այլ ցուցանիշների վրա, ներառյալ՝ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք համարվում են ընդունելի տվյալ հանգամանքներում:

21.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, չեն համապատասխանում իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները

Ընկերության ղեկավարությունը գնահատել է հիմնական միջոցների օգտակարության ժամկետները: Ընկերության ղեկավարությունը հավատացած է, որ այդ ակտիվների գնահատված օգտակարության ժամկետները էականորեն չեն տարբերվում սպասվելիք տնտեսական ժամկետներից: Եթե այս գնահատումները փոխվեն ապա Ընկերության ֆինանսական հաշվետվությունները էականորեն կտարբերվեն:

Հետաձգված հարկի գնահատում

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 5-ում 15,033 հազար դրամի հետաձգված հարկեր են ճանաչվել: Հետաձգված հարկային ակտիվներն ավելանում են արձակուրդի պահուստից: Ընկերության ղեկավարությունը հավատացած է, որ Ընկերությունը ապագայում կունենա բավարար հարկվող շահույթ, որպեսզի փոխհատուցի հետաձգված հարկային ակտիվները: Եթե Ընկերությունը ապագայում չկարողանա ստանալ հարկվող շահույթ, ապա հետաձգված հարկային ակտիվները չեն փոխհատուցվի:

22 Ֆինանսական գործիքներ

22.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության, և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.6-ում:

22.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր		
Առևտրային դեբիտորական պարտքեր	2,474,817	2,560,520
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	856,307	813,844
	3,331,124	3,374,364

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	2,472,387	2,553,620
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,157,072	827,641
	3,629,459	3,381,261

23 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը: Ընկերությունը չի ներգրավված սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

23.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, տոկոսադրույքային ռիսկի և որոշակի այլ գնային ռիսկերի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

բ) Արտարժութային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը: Ընկերության գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Ընկերության՝ արտերկրյա ձեռքբերումներից: Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև:

Հոդված 2025թ.	Հայկական դրամ	ԱՄՆ դոլար	Այլ
Ֆինանսական ակտիվներ			
Առևտրային դեբիտորական պարտքեր	2,474,807	10	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	848,257	8,026	24
	3,323,064	8,036	24
Ֆինանսական պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	2,319,288	153,099	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,126,827	2,674	27,571
	3,446,115	155,773	27,571
Զուտ արդյունք	(123,051)	(147,737)	(27,547)

Հոդված 2024թ.	Հայկական դրամ	ԱՄՆ դոլար	Այլ
Ֆինանսական ակտիվներ			
Առևտրային դեբիտորական պարտքեր	2,560,502	18	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	804,970	8,811	63
	3,365,472	8,829	63
Ֆինանսական պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	2,190,684	353,516	9,420
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	826,792	849	-
	3,017,476	354,365	9,420
Զուտ արդյունք	347,996	(345,536)	(9,357)

Ընկերությունը հիմնականում ենթարկվում է ԱՄՆ դոլարի փոխարժեքի ազդեցությանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 10% (2024թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2024թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2024թ.՝ 10%):

Հազար դրամ	ԱՄՆ դոլար ազդեցություն		Այլ արժույթի ազդեցություն	
	2024թ.	2025թ.	2024թ.	2025թ.
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	(34,554)	(14,774)	(936)	(2,755)

գ) Տոկոսադրույքային ռիսկ

Ընկերությունը ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկի, քանի որ ունի հաստատուն տոկոսադրույքներով փոխառու միջոցներ: Ընկերությունն այս ռիսկը կառավարում է՝ ապահովելով համապատասխան չափի հաստատուն տոկոսադրույքով փոխառու միջոցներ:

դ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը ֆինանսական կորուստներ կարող է կրել: Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

ե) Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

24 Իրական արժեքի չափում

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

25 Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունն առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները՝ փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանություն ապահովելու միջոցով:
Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, կուտակված շահույթը, ինչպես նաև փոխառու միջոցները, որոնք ներառում են փոխառությունները՝ բացահայտված ծանոթագրություն 10-ում:

Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը, որպեսզի ապահովի փոխառու միջոցների և սեփական կապիտալի մնացորդների առավելագույն օպտիմալ համապատասխանություն, որը վերլուծվում է՝ հաշվառելով ընդհանուր կապիտալը բաժանած ընդհանուր ֆինանսավորման վրա:

Հաշվարկը ներկայացվում է ստորև.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդհանուր սեփական կապիտալ	4,211,608	3,024,984
Հանած՝ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(856,307)	(813,844)
Կապիտալ	3,355,301	2,211,140
Ընդհանուր սեփական կապիտալ	4,211,608	3,024,984
Վարկեր և փոխառություններ	2,472,387	2,553,620
Ընդհանուր ֆինանսավորում	6,683,995	5,578,604
Կապիտալի և ընդհանուր ֆինանսավորման հարաբերակցություն	0.50	0.4

26 Պայմանականություններ

26.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ իրացվելիության ընթացիկ մակարդակը բավարար է կայուն գործունեության համար: Ընկերությունը պարբերաբար վերանայում է իր իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ:
Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Ընկերության ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Ընկերության գործունեության վրա:

26.2 Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է: Ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանի Հանրապետությունում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը՝ իր ակտիվների, գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին Ընկերության գույքի կամ գործառնությունների պատահարներից հասցված վնասի ապահովագրություն չունի: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական դրության վրա:

26.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետությունում հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոհիշյալ հանգամանքները կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել:

27 Գործարքներ կապակցված կողմերի միջև

27.1 Վերահսկողություն և գործարքներ

Ընկերությունը վերահսկվում է Ընկերության միակ մասնակցի կողմից:

Կազմակերպության գործարքները կապակցված կողմերի հետ բացահայտված են ստորև.

Անվանում	Գործարք հազ. դրամ	Առ 31.12.2024	Գործարքի Արժեք–զուտ	Առ 31.12.2025
Նորիկ Հակոբջանյան ԱՁ	Առևտրային դեբիտորական պարտքեր	1,439	2,360	3,799
Նորիկ Հակոբջանյան և Որդիներ ՍՊԸ		-	289	289
Երևանի Պողպատյա Խողովակների Գործարան Մետալ Ստիլ ՓԲԸ		11,718	1,298	13,016
Նորիկ Հակոբջանյան ԱՁ	Առևտրային կրեդիտորական պարտքեր	712,135	(53,503)	658,632
Նորիկ Հակոբջանյան և Որդիներ ՍՊԸ		-	2,877	2,877
Տրանս Մետալ Գռուպ ՍՊԸ		2,036	-	2,036
Երևանի Պողպատյա Խողովակների Գործարան Մետալ Ստիլ ՓԲԸ		3,328	12,753	16,081
Նորիկ Հակոբջանյան	Ստացված փոխառություններ	882,464	(170,000)	712,464
Երևանի Պողպատյա Խողովակների Գործարան Մետալ Ստիլ ՓԲԸ	Ստացված կանխավճարներ	11,508	409	11,917

27.2 Գործարքներ ղեկավարության հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը,

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ	41,954	45,144
	41,954	45,144

28 Գրավներ և տրամադրված երաշխավորություններ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի գրավներ և երաշխավորություններ Ինեկոբանկ ՓԲԸ-ում.

Ապահովության տեսակ	Պայմանագրի համար	Պայմանագրի կնքման ամսաթիվ	Պայմանագրի ավարտի ամսաթիվ	Գրավատու /երաշխավոր	Ապահովության արժեք	Արժ.
Շրջանառու միջոցներ	G20/057353	31/08/2020	02/02/2038	Մետալ Գռուպ ՍՊԸ	100,000,000	AMD
Երաշխավորություն	ER23/03275	05/06/2023	05/06/2031	Մետալ Գռուպ ՍՊԸ	71,697	USD
Երաշխավորություն	ER24/03291	30/05/2024	30/05/2057	Մետալ Գռուպ ՍՊԸ	10,000,000,000	AMD

29 Հետագա դեպքեր

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի 2026թ. հունվարի 14-ի թիվ 1/22 Ա որոշմամբ հաստատվել է Ընկերության պարտատոմսերի թողարկման ազդագիրը, որը տեղաբաշխողը հանդիսանում է Դայմենշն ՓԲԸ-ն: